տեսնում ենք Հեթում Բ.–ի ճաշոցի մէջ։ Զորրորդը Մկրտութիւնն է 121բ., Ցիսուս Ջրի մէջ ընկղմուած մինչեւ ուսերը։ Մի վերջին պատկեր էլ Յովհաննու հանդիստն է 224բ.։ Տալիս ենք միայն երրորդը, այսինքն երեք մանկունքը հնոցում, 14բ. (Պատկ. 18)։ Մեծութիւնն է 16×12, 2 սմ.։

Եթէ համեմատելու լինինք դիմագծերի առանձնայատկութիւնները, ոմանք աւելի մըշակուած են քան միւսները։ Օրինակ, Յովնանի կեանքի հետ կապուած երկու տեսարանով պատկերի մէջ նաւորդների դէմքերը ամբողջապէս կարմրաւուն են, ընդհանրապէս յատուկ Ռոսլինին, բայց այստեղ աւելի պակաս մշակուած. մինչդեռ ուրիշ տեղ, ինչպէս երեք մանուկներն են, հրեշտակի հետ աւելի թեթեւ կարմիր եւ շատ աւելի մեղմ եւ փափուկ արտայայտութեամբ։ Այսպէս եւ Մկրտութեան տեսարանի մէջ։ Այս հանդամանքը ենթադրել է տալիս, որ Զեռագրի մանրանկարչութեան մէջ բաժին ունին եւ վարպետի աշակերտները։ Թորոսի գործերը այնքան շատ են եւ նմանութիւնները առատ ժամանակակից գործերի մէջ, որ մի մարդու համար դժուար էր այդչափ առատ նիւթերով գործ կատարել։ Բայց այս մի խնդիր է, որ շատ աւելի մանրակրկիտ ուսումնասիրութիւն եւ համեմատութիւն է պահանջում։

* * *

Ռոսլինի եօթերորդ մեղ յայտնի գործը եւ Կոստանդին Կաթուղիկոսի ժամանակի տասներեքերորդը, իւր իսկ հրամանով պատրաստուած չքեղ աւետարանն է Լեւոն Գ.–ի ժառանգ պատանի Հեթում Բ.–ին նուիրուելիք, գրուած 1267 թուին։ Բերուած է Երուսաղէմ, Մալաթիայից, դեռ եւս առանց համարի։

Կազմը արծաթապատ է, 21×18 եւ մէջքը 9 սմ.։ Առաջին երեսի վերայ խաչելութիւնն է ոսկի թիթեղով, Մարիամ եւ Յովհաննէս աջից եւ ձախից, իսկ միւս կողմը նոյնպէս ոսկի թիթեղով Աստուածածինն է։ Բուն կազմը արծաթ, չորս կողերի վերայ անկիւններից անկիւն փոքրիկ քարերի շարքով զարդարած։ Մէջքը չղթայապատ։

Առաջին կազմողը եղել է մեղ յայտնի եւ գրութեան ժամանակակից Առաքել Հնաղանդենց, «Ի թվ. ՉԺԷ» =1268։ Ցայտնելով իւր եղբայրների Կարապետ քահանայի եւ Պաւղոս սարկաւագի, եւ ուսուցիչ Սարգիս քահանայի անունները, որոնք մեռած են։ Երկրորդը Մալաթիոյ Սիմէոն արքեպիսկոպոսն է, Արիստակէս բարձունապետի աշակերտ, «ի դուռն սրբոյն Գրիգորի ի ՉԳ (=1454) ի յունիս ամսեանն», որ այրուել է եւ նոյն տարին Նոյեմբերի 11–ին նորոգել է մահտեսի Պեհնամի որդի մահտեսի Կիրակոսը։ Կարծում ենք ներկայ կազմը այս ժամանակից է։ Նորոգութիւն է կատարուած եւ Մելիտինոյ վերադիտող Աբրահամ եպիսկոպոսի ձեռքով ՌՃՂԳ (1644) մայիսի 17–ին։

Ընծայականը եւ յիշատակարանները, մանաւանդ գլխաւոր յիշատակարանը Յովհաննու վերջում, պարզում են Զեռագրի ծագման հանգամանքները։ Ընծայականը գրուած է ոսկի դաշտի վերայ կարմիր գծերի մէջ, կապոյտը սպիտակով եղերուած գրերով.

Տր իմ քս լոյս գերարփի
Որ շրջեցար մարմնով յերկրի
Եւ զայս մատեան աւետալի
Մեզ հնչեցեր ձայն ցնծալի,
Դու զոր Կոստանդին հովիւ բա
րի, կաթողիկոս հայոց սեռի։
Զոր փոխեցեր ի յայսմ ամի, յա
թոռ նատ ընդ Պետրոսի։ Ամէն։

ՉԺԸ.

Միւս երեսին.
Եւ զժառանգող այսմ մատենի,
Զպարոն Հեթում համբակ բա
րի, որ է որդի նա Լեւոնի,
Որդոյ Հեթմո մեծ արքայի։
Պահեա կենաւք յերկարելի
Իւր ծնողաւքն եւ այլ զարմի
եւ ի քո փառսդ հայրենի։ Հա
զորդս ընգալ քեզ կրկնակի։ Ամէն։

Մատթէոսի վերջում, ոսկեգիր.
Զաճապատիւ տր/ Կոստանդին Կաթող/
իկոս, յիշեսջիք ի քս։
Մարկոսի վերջում.
Ընդ մեռասան/ին համադասեա քս/
զսրբազան կաթող/իկոսն տր Կոստան/դին
ստացող սորա/ եւ զեղբաւր որդի նո/րին
Թորոս քահա/նայ — յետոյ սեւ թանաքով —
եւ մեղապա/ռա դրչի սորա շնորհեա մեղաց
թողութի։
Ղուկասի վերջում ոսկեգիր.
Ընտրելոց մե/տասանիցն հաղ/որդս ընկալ
քս ած/ զոր Կոստանդին/ կաթողիկոսն հայ/
ոց ստացաւղ քոյ/ին բանի. եւ Թոր/ոսի
քահանայի/ եղբաւրորդւոյ/ նորա շնորհեայ/
դասիլ ընդ սրս քո/ եւ քեզ փառք յաւիտեանս
ա/մէն։

Գլխաւոր յիշատակարանը, ինչպէս ասացինք, գտնւում է Յովհաննու վերջում, որից